

«ԲԱՆԱԿԻ ՕՐ»ՈՒՄ ԱՌԹԻՒՄ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՊԱՏԳԱՄԸ

Հանրապետության նախագահ Գոր. Էմիլ Լահուտրանակի տոնին առիթով պատգամ մը ուղղվեց գինուտրականներուն, նկատել տալով, որ այս տարի տոնը կը նշուի այնպիսի պահու մը, երբ ամբողջ Լիբանանը կը տոնէ նաեւ հարաւի եւ արեւմտեան Պեքաւաի իսրայէլեան բռնազրուածներն ազատագրուածը:

«Այս ազատագրումը արդիւնքն է այդ շրջաններու բնակիչներու տոկոսներէն, դիմադրութեան գոհողութիւններէն, բանակին գորակցութեան, սուրիական նեցուկին եւ պետութեան յատուկ եւ անզիջող կեցուածքին», ըսաւ նախագահը:

Ան հաւատարմեց, որ տոկոսն եւ դիմադրելու, դատին հաւատարմութեան կառչած մնալու փաստը կարելի դարձուց անկարելին եւ թշնամիին պարտադրեց առանց նախապայմանի նահանջի, մինչ ազգային զիտակցութիւնը ձեռնարկէ մատնեց ազատագրուած շրջաններուն մէջ ներքին բախումներու վրայ դրուած զրաւը:

Շար. Էջ 10

ՄԻՆՉ ՊԱՂԵԱՏԻՆԵՒԻՍՏՐԱՅԷԼԵԱՆ

ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ

ԱՐԱՖԱՐ ԱՅՅԵԼԵՑ ՓԱՐԻՉ ԵՒ ՌԻԱՏ

Պաղեստինցիներն ու իսրայէլացիները երէկ շարունակեցին բանակցութիւնները: Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ տակաւին երկար ճամբայ կայ կտրելիք վերջնական ու անբողջական համաձայնագրի մը յանգելու համար:

Սաէպ Ուրալթաթ եւ անոր իսրայէլացի պաշտօնակիցը՝ Օնտէտ Էրան երէկ տեսակցութիւն մը ունեցան Երիքովի մէջ՝ բանակցելու



Արաֆաթ Շիրաքի մօտ

ԹԱՄՆԱՄ ՍԱՄԱՐ ԿԸ ԲՆՆԱԿԱՄԷ ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՄԱՆՈՇՈՒԹԻՒՆԸ ԵՄԱՍՏՈՂ ՀԱՐԻՐԻԻ ԲԱՅԼԸ

ՀԱՐԻՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ՊԵՅՐՈՒԹԻ ԵՐԵՔ ԸՆՏՐԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

Նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրի խորհրդարանական ընտրաշրջանի վերտնջումի կեդրոնատեղիին մէջ երէկ մամուլի ասուլիս պիտի տար՝ յայտարարելու համար Պէյրութի երեք ընտրաշրջաններու իր թեկնածուներուն ցանկերը, բայց մամուլի ասուլիսը վերածուցաւ ընտրական ժողովրդային հաւաքի, որուն ընթացքին յայտարարուեցան միայն թեկնածուներուն անունները, ապա Քրէյթի մի ապարանքին մէջ Հարիրի տուաւ մամուլի ասուլիսը: Վերտնջումն յայտարարուած «Արժանապատուութիւն» ցանկերն են. -

- Ա. ընտրաշրջան
Ատնան Արաբժի (սիւննի)
Միշէլ Ֆարաան (յուն կաթողիկէ)
Ղաթթաս Խուրի (մարոնի)
Աթէֆ Մաժալանի (յուն ուղղափառ)
Պասէլ Ֆիշյան (աւետարանական)
- Բ. ընտրաշրջան
Պարա Մորհի (յուն ուղղափառ)
Եղիա Ճէրճեան (հայ առաքելական)
Ուալիտ Իտո (սիւննի)
Պասէլ Եամմուք (սիւննի)
Նապիլ Տր Ֆրէյթ (փոքրամասնութիւններ)
- Գ. ընտրաշրջան
Մուհամէտ Քապպանի (սիւննի)
Ղինուա Ժալլու (սիւննի)
Ղազի Արիտի (տիւրքի)
Նասր Քանտուի (չիի)
Ժան Օղասապեան (հայ առաքելական)
Յակոբ Գասարճեան (հայ առաքելական)
Սեթ Թուրքարգիսեան (հայ կաթողիկէ)
Հարիրի իր համակիրներուն առջեւ արտասանած խօսքին մէջ մտղայեց, որ Պէյրութի բոլոր ընկերները մասնակցին ընտրութիւններուն:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ Է. Յ. Դ. ԹՐԻՓՈԼԻԿ ԿՈՄԻՏԵՒՆ

Անցեալ շաբաթ Է. Յ. Դ. Թրիփոլի Կոմիտէն իր ակումբին մէջ ընդունեց այցելութիւնները երեսփոխան Մրապան Ահտայի (Թրիփոլի, սիւննի), ինչպէս նաեւ երեսփոխանական թեկնածուներ Ժոզէֆ Շիլանի (Քուրա-յուն ուղղափառ) եւ տղթ. Ուալիտ Իրաուի (Թրիփոլի-սիւննի):
Հանդիպումներուն ընթացքին բնակարանեցան մասնաւորաբար հիւսիսային Լիբանանի մէջ խորհրդարանական ընտրութիւններուն վերաբերող հարցեր:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՄԻՆ ԺԵՄԱՅԷԼ ԺԱՄԱՆԵՑ ՊԵՅՐՈՒԹԻ

Նախկին նախագահ Ամին Ժեմալէ երէկ երեկոյան ժամը 5:00ին Պէյրութ ժամանեց Փարիզէն, ուր կ'ապրէ 12 տարիէ ի վեր:
Պէյրութի օդակայանին մէջ նախկին նախագահը դիմաւորեց ընտանեկան պարագաները: Ուշագրաւ էր պաշտօնական անձնատուրութիւններու բացակայութիւնը:
Ան օդակայանի պատուոյ սրահին մէջ ըսաւ, որ երջանիկ է հայրենիք վերադառնալուն համար:
Ժեմալէ օդակայանէն ուղղուեցաւ դէպի ծննդավայր Պիքֆայի իր ապարանքը, ուր դիմաւորուեցաւ մեծ թիւով լիբանանցիներու կողմէ եւ արտասանեց խօսք մը:
Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆաթ երէկ Սէուտական Արաբիա մեկնեցաւ տեսակցութիւն ունենալու համար Զահտ թագուորին եւ գահաժառանգորդին հետ:

ԱԶՐՊԷՅՃԱՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵՅ ԵՐԿՈՒ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐ

Ազրպէյճան Ուրբաթ օր ազատ արձակեց երկու հայ գերիներ, որոնք նոյն օրը Միջազգային Կարմիր խաչի աշխատակիցներու ուղեկցութեամբ Երեւան փոխադրուեցան:

Երկու գերիները՝ Տիկո Տիկոյան (եզիտի) եւ Միշա Մանուկեան յայտնեցին, որ գերութեան ընթացքին իրենց նկատմամբ ֆիզիքական բռնութիւններ գործադրուած են: Անոնք ըսին, որ ազատ արձակուելէն ետք իրենց պարտադրուած է, որ յայտարարեն, թէ կը հրաժարին Հայաստան վերադառնալէ, սակայն իրենք չեն ընդունած:

Մ. Մանուկեանի համաձայն, Ղուբաթի մէջ հինգ ամիս գերութեան ընթացքին տեղեկացած է, որ կան երեք հայ գերիներ, որոնցմէ մէկը մահացած է:

Տ. Տիկոյան գերկալուած է 30 Մայիս 2000ին, Ղազախի սահմանին մօտ, իսկ Մ. Մանուկեանը՝ 25 Յունուար 2000ին, Մարտակերտի մօտ:

Պաքու մինչեւ Յունիսի առաջին կէսը կը յայտարարէր, որ Ազրպէյճանի մէջ հայ գերիներ չկան:
Այս տարուան ընթացքին Հայաստան Ազրպէյճանին յանձնած է 12 գերի, իսկ Ազրպէյճան միայն երեք գերի:

(ԱՐՄԷՆՓՐԷՍ, ՌՈՅԹՐԸԶ)

ՌՈՒՄԻԱ ՊԵՏԷ Է ՉԵՉՈՔ ԴԻՔՈՐՈՇՈՒՄ ՈՐԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՀԵՏ ԻՐ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՍԷՉ

Կ'ԸՍԷ ԿՈՒԼԻԵՒ

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիէ յայտնեց, որ խաղաղ նպատակներու համար կորիկային ուժանիւթի մարպիւն մէջ Ռուսիոյ եւ Հայաստանի միջեւ գործակցութիւնը կրնայ վնասել Ռուսիոյ դիմագիծին՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին մէջ իբրեւ միջնորդ:

Կուլիէ նշեց, որ Ռուսիա չէպէր դիրքորոշում պետք է որդեգրէ երկու երկիրներուն հետ իր յարաբերութիւններուն մէջ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԸ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԲՈԼՈՐ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ

Թուրքիոյ երիտասարդ ապագայականներու կեդրոնը աշխարհի թրքացեղ ժողովուրդներուն լիցած իր կոչին մէջ կը յայտնէ, որ Լեռնային Ղարաբաղը ոչ միայն ապրպէյճանական հող է, այլ լի կը պատկանի աշխարհի բոլոր թուրքերուն, որոնց պարտականութիւնն է ապատարել նախարարական կապիտալիստական կողմէ գրաւուած այդ շրջանը:

Թուրք ապագայականները պատրաստակամութիւն յայտնած են բոլոր միջոցներով օժանդակելու ապերի եղբայրներուն՝ Լեռնային Ղարաբաղը ապատարելու համար:

ՊԱՏԱՐԱԳ՝ Ս. ԹԱԴԻԻ ՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Ս. Թադիի վանքի ուխտագնացութեան շրջագիծին մէջ, Շաբաթ օր, շուրջ տասը հազար հայ հաւատացեալներու մասնակցութեամբ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ պատարագ:

Ուխտագնացութեան կը մասնակցին նաեւ Սփիւռքի գանազան շրջաններէ եկած հայեր:

Իրանի կառավարութիւնը ելկտրականութեամբ եւ այլ դիւրութիւններով օժտած է Ս. Թադիի վանքը, որ կը գտնուի Իրանի հիւսիս արեւմտեան Թաւրիզ քաղաքէն 230 քմ. հեռավորութեան վրայ:

ՎՐԱՍՏԱՆԷՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԻՓԵՐՈՒ ՀԵՌԱՅՄԱՆ ԳԾՈՎ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ

Ռուսիա եւ Վրաստան շաբաթավերջին համաձայնութիւն գոյացուցած են Վրաստանէն ռուսական ուժերու հեռացման գծով:

Ռուս զինուոր բանազանց, փոխ վարչապետ Բիլա Քլեպանով Շաբաթ օր յայտնած է, թէ ռուսական ուժերը այս շաբաթ պիտի սկսին հեռանալ Վրաստանէն, իսկ մինչեւ 2001 թուականի կեսերը կ'ովկաստան այդ երկրին մէջ գտնուող ռուսական փնտրական երեք խորհուրդներն մէկը պիտի փակուի:

Շար. Էջ 10

ԱԿՆԱՐԿ

«ԱՆ ՈՐ ԿԸ ԳԵՌԻՒԻ, ԿԸ ԾԱԽՈՒԻ»

Կը յիշեմ, Այնճարի դրացի գիւղերէն մեկուն պատասխանատուները օր մը, կ'երթան իրենց ընտրած երեսփոխանին մօտ, գանգատելու թէ անհամիներ անցած են եւ ինք իր նախընտրական իրաւունքները իրենց գիւղը բարեգործելու չէր յարգած, թէեւ կարգ մը ճարտիկ գիւղացիներ, ներառեալ ներկայիս Լեռնային Ղարաբաղի օգտուած էին նախկին: Երեսփոխանը, հանրածափ երամէն ընտրութեանց քուէ «գնելու» առեւտուրով: Երկուստեք ծագած վիճաբանութիւնը, կանգ կ'առնէ երբ երեսփոխանը, ջղախնայեցած կ'ըսէ. «Ինք ինձի չքուէարկեցիք, դուք ինձի քուէ ճարեցիք. եւ ես ձեր քուէն, որպէս ազատքեղի կապոց գնեցի: Ես ձեզի դրամ վճարեցի եւ դուք ինձի ձեր գիւղին ազատքեղի կապոց (քուէ)»

ՊԵՏՐՈՍ ՇԵՄՍԵՍԻԱՆ
Շար. Էջ 2

Հ. Յ. Դ. «ԿՈՒՐՄԻ ԼԵՌՆ» ԿՈՄՍԵՒ ԿԸ ՉՈՒՆԵՐԻ ՊՈՒԹԵՒՄԸ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԽՐԱԽՃԱՆՔ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՉ

Շաբաթ, 29 Յունիս 2000ի երեկոյան, Այնճարի Համագայինի ակումբի շրջակային մէջ տեղի ունեցաւ ժողովրդային խորհրդանք մը՝ խանստորի արշաւանքի 103րդ ամեակին առիթով, Հ. Յ. Դ. «Կարմիր Լեռ» կոմիտէի կազմակերպութեամբ: Ընտրական բնույթ ունեցող եւ երեսփոխան Ժորժ Գասարճիի հովանաւորութեամբ այս ձեռնարկին մեծ թիւով հայորդիներու կողքին ներկայ էին նաեւ քաղաքական անձնաւորութիւններ՝ նախարար Արթուր Նազարեան, երեսփոխաններ՝ Էյի Աքաֆ, Նալիլ Հրաւոհ, Մուհամէտ Մէյս, Նիքոլա Ֆաթթու, հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Սեպուհ Յովնանեան, Ժաք Չուխատարեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարտիան, Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէի ընկերներ եւ երեսփոխանութեան րազմաթիւ թեկնածուներ:

Խօսք առաւ Պեքաւաի հայ երեսփոխան Ժորժ Գասարճի, որ շեշտը դրաւ խորհրդարանական ընտրութիւններուն հայութեան միասնական կեցուածքին վրայ ընդհանրապէս Լիբանանի եւ յատկապէս Պեքաւաի մէջ: Երեկոյն անցաւ խանդավառ մթնոլորտի մէջ:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱԻԱՔ՝ «ԱԼԵՔՍԱՆՏՐ» ՊԱՆԴՈՎԻՆ ՄԷՉ

Այսօր, երեկոյան ժամը 8:00ին, Էշրէֆիէի «Ալեքսանտր» պանդոկին մէջ տեղի պիտի ունենայ Հ. Յ. Դ. Ընտրական Կեդրոնական Մարմինին կազմակերպութեամբ շորրորդ հաւաքը՝ լիբանանահայութեան հետ: Այս հանդիպումին իրաւորուած են հայ բժիշկներ, դասախօսներ, դեղագործներ, ատամնաբուժներ, ճարտարագէտներ, փաստաբաններ եւ բարեպաշտական հաստատութեանց ներկայացուցիչներ:

Նշենք, որ նախորդ երեք հանդիպումները կատարուած էին «Սիկալ» եւ «Ալեքսանտր» պանդոկներուն մէջ՝ հայրենակցական, թաղային (Եկեղեցու, դպրոցներու) եւ ազգային իշխանութիւններու խորհուրդներու եւ յանձնախումբերու ներկայացուցիչներուն հետ:

Սոյն հաւաք - հանդիպումները կը միտին խորհրդարանական ընտրութեանց նախօրեակին հայութեան կեցուածքը, ինչպէս նաեւ՝ այս ուղղութեամբ տեղի ունեցող վերջին իրադարձութիւններուն մասին պեկուցել եւ լուսաբանել:

ԱՅՍՕՐ՝ ԸՆԵՍԷԹԻ ՄԷՋ
ԿՈՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԶՈՒԷՐ ԶԱՐՑ

ԼԵՒԻ ԱՌԻԹ ԿՈՒ ՏԱՅ ՊԱՐԱՔԻ

Իսրայելի արտաքին գործոց նախարար Տէյվիտ Լեւի, որ որոշած էր հրաժարիլ էճուտ Պարաքի կառավարութեանը, երէկ յայտարարեց, որ առկախած է իր որոշումը՝ քանի որ սր եւս տալով վարչապետին ազգային միութեան ընդարձակ կառավարութիւն մը կազմելու համար:

Լեւի ըսաւ, որ կարելի եղած բոլոր միջոցներուն պիտի դիմէ ստեղծելու համար յիշեալ կառավարութիւնը: Ան աւելցուց, որ եթէ մինչեւ Զորքարթի օր չյաջողի պիտի հրաժարի:

Լեւիի որոշումը ցոյց կու տայ, որ ան պիտի չօժանդակէ Պարաքի կառավարութիւնը տապալելու ծրագրին յաջողութեան: Պարաքի կառավարութիւնը վստահութեան քուէի մարտահրաւէր մը պիտի դիմագրակէ այսօր խորհրդարանին մէջ: Եթէ Լեւի Պարաքի դէմ քուէարկէ, կառավարութեան տապալումի գործընթացը կ'արագանայ:

Լեւի իր որոշումը յայտարարեց Պարաքի հետ ունեցած տեսակցութեան աւարտին: Լեւի անցեալ շաբաթի դիպոցութիւն յայտնած էր, որ Պարաք մեծ պիջումներ կատարած է պաղեստինցիներուն, փոխարէնը շատ քիչ բան ստանալով Քէմփ Տէյվիտի բանակցութիւններէն: Լեւի մերժած էր մասնակցիլ Քէմփ Տէյվիտի բանակցութիւններուն, որովհետեւ Պարաք չէր խորհրդակցած իրեն հետ՝ պաղեստինցիներուն կատարուելիք գիշումներուն մասին: Իսրայելեան մամուլը գրած էր, թէ Լեւի անտեսած կը զգայ, որովհետեւ Պարաք որեւէ բան չէ հաղորդած խաղաղութեան գործընթացին առնչուող ծրագիրներուն մասին:

Ընդդիմադիր ճակատը 61 քուէի կարիք ունի տապալելու համար Պարաքի կառավարութիւնը: Լեւիի դեմ կարծիք Կեչէր կուսակցութեան քուէները կ'որոշեն լով՝ ընդդիմադիրներուն համար անհրաժեշտ են ծայրայեղական կրօնական Միացեալ Թորա կուսակցութեան քուէները:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՍՐԱՅԷԼԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՃԱՎԱՏԱԳԻՐԸ ԿԱՆԵԱԼ Է ՇԱՍԷՆ

ԵՐՈՒՍԱԸՆՄ, 30 (ՌՈՅԹԸՐԶ).- Շիմոն Փերէսի Իսրայելի նախագահ ընտրուելու կախեալ է ծայրայեղ կրօնական Շաս կուսակցութեան կրօնաւորներու Գերագոյն խորհուրդէն:

Շասի կրօնաւորներու Գերագոյն խորհուրդը, որ կը ձեռնարկէ կուսակցութեան քաղաքական ուղեգիծը, որոշում պիտի տայ, թէ նախագահական երկու թեկնածուներէն որո՞ւն գորավիզ պիտի կանգնի: Կրօնաւորներու խորհուրդին որոշումին հիման վրայ Քնեսէթին մէջ Շասի 17 ներկայացուցիչները իրենց քուէները պիտի տան Փերէսի, կամ աջակողմեան Մոշէ Քանցաւի:

Հարցախոյզերու արդիւնքներուն համաձայն, իսրայելցիները կրօնախորտներ ֆերէսը: Հարցախոյզերը մեծ նշանակութիւն չունին, որովհետեւ Քնեսէթի 120 անդամները կ'ընտրեն Իսրայելի նախագահը եւ ոչ թէ ժողովուրդը: Մեկնարաններու համաձայն, առանց Շասի գորակցութեան, Փերէս 55 քուէ կրնայ ապահովել, իսկ Քանցա՝ 31 քուէ:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐՈՒՄՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

F	6:30 - Բացում
M	6:35 - Բարի լույս
	7:00 - Հայկական եւ օտար մեղմ երգեր
9	8:00 - Օրուան լայտագիրի ընթերցում
4	8:15 - Տեղական մամուլի խորագիրներու ընթերցում
7	8:30 - Հայերէն լուրեր
	8:40 - Օդերեւոյթ
	8:45 - Ինչ կ'ըսեն աստղերը
M	9:00 - Հայկական խառն երգեր
H	9:30 - Թոխչք
Z	10:00 - Սակարան
	10:30 - Արաբերէն լուրեր
	10:45 - Արաբերէն երգեր
2	11:30 - Հեղինակային
4	12:00 - Շահանդուխտի հետ
4	12:15 - Երաժշտութիւն
1	12:30 - Հայերէն լուրեր
2	13:00 - Սակարան
7	13:05 - Ազգային լեզուափոխական երգեր
2	14:30 - Արաբերէն լուրեր
	15:00 - Արաբերէն լայտագիր
	16:30 - Արաբերէն լուրեր
	16:40 - Հանդիպում
	18:00 - Տաղարան
2	18:30 - Հայերէն լուրեր
4	18:40 - Հայերէն լուրեր
1	20:30 - Էսթրատային
1	22:30 - Պատուէր
9	00:30 - Փակում
9	

ԹՈՒՐՔԻԱ ՉԻ ԿՐՆԱՐ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼ ՔԻՐՏԵՐՈՒՄ

ԿՐՄԷ ՊԱՇՉԵԼԻ

Թուրքիոյ փոխ վարչապետ Տելէթ Պահչէլի Շարք օր յայտնած է, թէ Թուրքիա չի կրնար փոքրամասնութեան կարգավիճակ տալ քիւրտերուն, որովհետեւ նման քայլ մը քիւրտ ըմբոստներու մղած անջատողական պատերազմը պիտի օրինականայ:

Քիւրտ ըմբոստ դեկավար Ապտիլլա Օճալան, որ անցեալ տարի մահուան դատապարտուած էր դաւաճանութեան յանցանքով, բանտի իր խուցին պիտեայներուն հրահանգած էր պիւնտալ պայքարը դադարեցնել եւ փոխարէնը իսաւրապ արշաւ մը տանիլ Երկրի 12 միլիոն քիւրտերուն մշակութային իրաւունքներ ապահո-

վելու համար: Երուպական Միութիւնը թրքական իշխանութեան կողմէն կոչուող լիքութեան եւ սփռումներու մէջ թրքութեան դէմ սահմանափակումները մեղմացրու մը եւ իր մարդկային իրաւունք մարտը բարեփոխելու իրեն դէպի Ե. Միութեան անդամակցութիւն քայլ մը:

Թուրքիա ցարդ մերժած է ըսելով, որ օրէնքին դիմաց քիւրտերը թուրքերուն հետ նոյն իրաւունքները կը վայելեն: Միայն ոչ իսլամներ Թուրքիոյ մէջ փոքրամասնութեան կարգավիճակ կը վայելեն եւ ունին իրաւունքներ, ինչպէս իրենց սեփական լեզուով կրթութիւն ստանալու իրա-

ւունքը:

«Մեզի համար անկարելի է ընդունիլ նման մտեցում մը, որ համայնքային հիմունքով կրնայ ահաբեկչական շարժում մը արդարացնել՝ յառաջացնելով փոքրամասնութեան նոր գաղափար մը, որ Լօպանի համաձայնագիրին կատարած փոքրամասնութեան անկարգութեանն էր անդին կ'երթայր, ըսած է Պահչէլի. «Հիրրիէթ» օրաթերթին մէջ լոյս տեսած հարցալրոյցի մը մէջ:

Կառավարական ընկերակցութեան մէջ Պահչէլիի պահպանողական գործակիցները կը թուին քրտական մշակութային իրաւունքներուն գծով աւելի մեղմ կեցուածք մը որդեգրել: Պահպանողական Մետութ Երլմալ, որ Թուրքիոյ Ե. Միութեան անդամակցութիւնը ապահովելու համար ի գործ դրուող ճիգերը կը համակարգէ, անցեալ շաբաթ յայտնած է, թէ հիմա որ «ա հաբեկչութիւնը» վերջ գտած է, Անգարա կրնայ անսխալնքաց քայլերու դիմել:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՉԵԶԷՆՆԵՐՈՒ ԵՒ ԲՈՒՍԱԿԱՆ ՈՒՃԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԲԱՒՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Չեզեն ըմբոստ ուժերը շարափակներին դարձեալ թակարդ յարած են ռուսական ուժերու դէմ, որոնք կ'ուղղուէին դէպի շրջանի հարաւային լեռները՝ դիմադրութիւնը ձգտելու համար: Դէպքը պատահած է շրջանային մայրաքաղաք Կրոզնիի հարաւարեւելեան արուարձաններէն Փրիկո-րոտնոյէ գիւղին մօտ, խաչմերուկի մը վրայ: Անոր յաջողութեան մասին տեւողութեամբ թախտ մը:

Ըստ «ԷՆ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին, ռուս զինուոր մը գոհ գացած է եւ ուրիշ մը վերաւորուած: Սակայն Կրոզնիի Չեզենիոյ հարցերու բանրեր Սերգէյ Շասթրժեմպսքի ըսած է, թէ ռուս զինուոր մը վերաւորուած է եւ գոհեր չկան:

Մինչ այդ հաւանական խաղաղարար բանակցութեանց գծով աւելի եւս չփոթ ստեղծելով՝ կովկասեան շրջանին մէջ Կրոզնի-նիներկայացուցիչ Վիքթոր Քազանցեւ Շարափ օր «Ս. Ար. Թի.» պատկերասփիւռի կայանին յայտնած է, թէ բանակցութիւններ կրնան տեղի ունենայ ըմբոստներու փոքր խմբակներու հետ, սակայն ո'չ չեզեն նախագահ Ասլան Մասխատովի հետ:

Մինչ այդ, օր մը առաջ, Քազանցեւ ըսած էր, թէ բանակցութիւններ ընթաց-

ԼԻՊԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ ՄՈՍԿՈՒՍԻ ՄԷՋ

ՄՈՍԿՈՒՍ, 30 (ՌՈՅԹԸՐԶ).- Լիպիոյ արտաքին գործոց նախարար Կիրակի օր Մոսկուա հասաւ պաշտօնական այցելութեան մը համար, որուն ընթացքին տեսակցութիւն պիտի ունենայ նախագահ Վլատիմիր Փութինի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու հետ: Ապտեյուհան Եալկամ պիտի քննարկէ երկկողմանի կապերն ու միջազգային այլ հարցեր: Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը չյայտնեց, թէ ետօրեայ այցելութեան ընթացքին ի՞նչ հիւրեր պիտի արձարծուին:

քի մէջ են պատերազմը դադարեցնելու համար, եւ թէ անոնց կրնայ մաս կազմել նաեւ Մասխատով: Սակայն Շարափ օր ան ըսած է, թէ փափաք չունի Մասխատովի հետ տեսակցելու:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԱՆԳԱՐԱ ՊԻՏԻ ԱՏՈՒԳԷ ՀԻՄՆԱՍՏԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅԹԱՅԹԱԾ ԻՐ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՒՆ «ՃԱԿԱՍԱԳԻՐ»Ը

Թուրքիա շարափակերջին հիւսիսային Կիպրոսի կառավարութիւնը ամբաստանած է տընտեսական մարկին մէջ վատ տնօրինումներու յանցանքով եւ ըսած է, թէ այդ «պետութեան» հանդէպ յատկապէս պարակցութիւնը այսուհետեւ խիստ հսկողութեան ենթակայ պիտի ըլլայ:

Կարգ մը մեկնաբաններ յայտնած են, թէ հիւսիսային Կիպրոսի մէջ ժողովրդային դժգոհութիւնը, ցոյցերը եւ տնտեսական վիճակին վատթարացումը կրնան թափ տալ ճնշումներուն՝ Կիպրոսի հարցին լուծում մը գտնելու համար:

Հիւսիսային Կիպրոսը, որ միայն Թուրքիոյ կողմէ կը ճանչցուի եւ անոր օժանդակութիւններէն կախեալ է, քաղաքական անսխալնքաց լարուածութիւն կ'արձանագրէ, մինչ թրքական թերթերը կ'ըսեն, թէ կառավարութիւնը պիտի չկարենայ յառաջիկայ ամսուան պետական պաշտօններու ամսականները վճարել:

Թուրքիոյ վարչապետ Պիլիքս Էճեհիտ յայտնած է, թէ հիւսիսային Կիպրոսի լարուածութիւնը աւելի տնտեսական, քան քաղաքական հարց է, նկատի ունենալով, որ անիկա միջազգային անպարկոյի տակ է:

Սակայն անցող քանի մը տարիներուն, ըստ Էճեհիտի, հիւսիսային Կիպրոսի տնտեսութիւնը լար եւ պատասխանատու ձեւով չէ տնօրինուած: «Միշտ դրամ հայթայթած ենք եւ կը շարունակենք օժանդակել, սակայն կը պահանջ անհրաժեշտութիւնը ստուգելու, թէ դրամը ո՞ր կ'երթայ», ըսած է ան:

Թրքական «Սապահ» թերթին մեկնաբաններէն մէկը մուր գոյներով նկարագրած է թուրք կիպրացիներուն եւ Թուրքիոյ թուրքերուն միջեւ յարաբերութիւնները, ըսելով. «Վտանգաւոր երկփեղկում մը հետպիտէտէ աւելի կը յայտնուի երկուքին միջեւ»:

«Տեղական լրատու աղբիւրները թրքական պետութեան եւ սպայակոյտին դէմ անբաստանութիւններ կը կատարեն: Վտանգը այն է, թէ որեւէ ատեն երկու խմբակները Նիկոսիոյ փոփոցներուն վրայ բիրտով բախում կրնան ունենալ», ըսած է ան:

Շաբ.՝ էջ 10

National
Air Conditioners

Clean & Quiet
Add quality to your life!

Satisfying the World's Safety Standards

ISO 9002

U.S.A. International Japan

AKNOR NEMKO

Spain Norway Germany France

TUTUNJIAN CORP. S.A.
Exclusive Agents
Tel.: (04)-712129/130

ԿԱՐԵԼԻ ԶԷ ԽԱՆՍՏԵԼ ՀԱՅՅՈՒԹԵԱՆ ՄԻԱՍԿԱՄՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ԱՐԵՎԿՈՒԹԱՅԻՆ «ՍԻՓԱՆ» ԼՐԻՈՒԹԵՒՆ
ԼԱՐԶԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՒՆ
ՆԱԽԱՋԵՆՆՈՒԹԵՒՆ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ «ՍԻՓԱՆԻ ԳԱԻԱԹ» 26ԻՂ ՄՐՑԱՇԱՐՔԻ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԲԱՅՈՒՍԸ

19 Յուլիսին Թեհրանի «Սիփան» մշակութային միութեան կեդրոնին մէջ տեղի ունեցած է «Սիփանի գաւաթ» 26րդ մրցաշարքիի բացումը: Այս մրցաշարքը նուիրուած էր Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին:

Բացման արարողութիւնը սկսած է «Սիփան» միութեան մարմնակրթարանի գալլիկ - արծուիկներու տողանցքով: Միութեան վարչութեան կողմէ կատարուած բացման խօսքէն ետք ելոյթ ունեցած է հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան մարզական միութեան ղեկավարներու խումբը: Այս միութեան պարայինում բի կրտսերները ներկայացուցած են գեղարուեստական յայտագիր մը:

Բացման արարողութեան ներկայ էր Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհեան: Սարգիսեան, որ այս առիթով փոխուցած է իր պատգամը: Նաեւ ներկայ եղած են թեմական եւ ազգային մարմիններու եւ տարբեր միութիւններու ներկայացուցիչներ եւ ազգայիններ:

Մէկ շաբաթ տեսած մրցաշարքիին ընթացքին իրանահայ մարզական միութիւններու միջեւ ունեցած են պայքերի ու ճակատամարտերի մրցումներ:

ԱՆԳՐԱՆԻԿ ԱՂԱՃԱՆՆԵՐԻ ՆՈՒԷՐԸ ՀՕՄԻՆ

Արեւմտեան Ամերիկայի մէջ 1 Ապրիլին տեղի ունեցած է ՀՕՄԻ Հիմնադրութեան 90ամեակի տօնակատարութիւն:

Այս առիթով արուեստագէտ Անդրանիկ Աղաճանեան ՀՕՄԻ ԵՐԻՎԱՆ Վարչութեան նախագահ էր փոխարինուած զանգակատուներ, որոնք իր ձեռքով շինուած էին եւ հայկական ճարտարապետութեան նմուշ մը կը ներկայացնէին:

Անոնք գետնեղած են ՀՕՄԻ ԵՐԻՎԱՆ Վարչութեան նորակառուց շէնքին ժողովարահին մէջ:

Անդրանիկ Աղաճանեան ծնած է Հայկ, 1927ին, Ջարդ տեսած տիգրանակերտցի հաւատացեալ ծնողներէ: Ան գնահատականներ եւ ոսկի մետալներ ստացած է նախկին Խորհրդային Միութեան եւ Հայաստանի կառավարութիւններէ:

Ան հայկական մանրակերտ վանքեր, եկեղեցիներ եւ յուշարձաններ շինելու գաղափար յղած է, որպէսզի ստարներ տեսնեն, թէ՛ հայ ժողովուրդը քրիստոնէութիւնը ընդունող աշխարհի առաջին պետութիւնն է, ինչպէս նաեւ՝ Հին եւ ընտիր մշակոյթ ունեցող ժողովուրդ մը:

Հայոց ճարտարապետութեան այս մանրակերտները 1987ին ի վեր 22 անգամ ցուցադրուած են գանազան դպրոցներու եւ միութիւններու մէջ, սակայն այսօր բոլորն ալ կը գտնուին 73 տարեկան արուեստագէտին բնակարանի մէջ:

Աղաճանեան կը փափաքի, որ Ազգ. առաջնորդարար կամ կազմակերպութիւն մը գնէ այս բոլորը եւ գտնուի ցուցադրել թանգարան-սրահի մը մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՆԱԿՅԵՑԱԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

16ԷՆ 18 Յունիս, Սելաքիկի մէջ տեղի ունեցած են միջազգայնացեալ համաերկրպական առողջապահական կեդրոնին բացումը եւ միջազգային բժշկական գիտժողովը:

Գիտժողովին մասնակցած է նաեւ Հայաստանի պատուիրակութիւնը, Հայաստանի առողջապահութեան փոխ նախարար Արտակ Չէլցալեանի եւ Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Արմէն Պետրոսեանի գլխավորութեամբ:

Կեդրոնի բացման արարողութեան ընթացքին ողջոյնի խօսք արտասացած է Արտակ Չէլցալեան, որ անդրադարձած է հայ-յունական բարեկամութեան եւ համագործակցութեան:

ՄԱՆԱԿՅՈՒԹԻՒՆ «ՄԷԿ ԱՄԵՐԻԿԱ» ԿԱՐԳԱՆՈՍՈՒՄ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Անցնող շաբաթներուն ընթացքին ամերիկահայ ներկայացուցիչներ մասնակցած են Սպիտակ Տան կողմէ կազմակերպուած «Մէկ Ամերիկա» կարգախօսով խորհրդաժողովի մը, որ նուիրուած էր միջկրկային երկխօսութեան, հաշտարար միջոցառումներ կարգադրուած են համապատասխանութիւններու համար կարեւորութիւններու ստեղծումին:

Խորհրդաժողովին նախագահած է Պէն Ճանսըն՝ Սպիտակ Տան անձնակազմէն (նաեւ՝ նախագահ Քլիմթրիսի օգնական): Ներկայ եղած են չուրվ քսան ազգային խումբաւորուներու ղեկավարներ:

Խորհրդաժողովին մասնակցած են նաեւ իտալացի, արաբ, հրեայ, փորթուգալացի, ռուսացի, սերպ, լեհ, յուն, հունգարացի, այլանացի, գերմանացի, խրուաթ եւ իթիվանացի համայնքներու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

ԱՍՈՒՆԱՅԻՆ ՀԱՅՈՒՄՆԵՐ Ե. ԴԱՍԸԹԱՅԸ

Համազգայինի քանադայի Շրջանային Վարչութիւնը կազմակերպած էր ամառային հայագիտական հիմնադրող դասընթացը: Բալի-Ֆորմիլան յատկապէս իրաւիրուած էր պատմաբան դոկտ. Լեոն Մարաշեանի: Դասընթացը սկսաւ 5 Յուլիսի եւ շարունակուեցաւ մինչեւ 10 Յուլիս, Սոնտրալի յայ կեդրոնի թիւ 3 սրահին մէջ:

Դասընթացքին հետեւողները դոկտ. Լեոն Մարաշեանի տեսարկներուն ճիշտ հաւաքածոյին ընդմէջ միասնաբար վերլուծած են հայոց արդի ժամանակակից պատմութիւնը եւ քննական մտնեցումով կեդրոնացած են 1900-2000 ժամանակաշրջանի կարեւոր դէպքերուն եւ իրադարձութիւններուն վրայ:

ԻՍԿ 3ԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ԱԶԲԵՐՈՒՄ ԶՂՋՈՒՄ ԶԿԱՐ

Շուրջ 2 շաբաթ առաջ բոլորիս ուշադրութիւնը բերուած էր հեռուստացոյցի պատահի տեղեկանայլու, թէ ինչով աւարտուեց երեք զինուորական ծառայողների արևմտ «ողիսական», երբ թըմրանիկի եւ այլոյի ազդեցութեան տակ գտնուող 20ամեայ դասալիքները խլեցին 8 հոգու կեանք: Յարգողը 2 օրուան ընթացքում իրաւապահ մարմիններին յաջողուեց գտնել նրանց ու վնասագործել: Արդէն սթափուած յանցագործները, որոնք ներկայումս ռազմական ոստիկանութեան հսկողութեան տակ են, օրերս հեռուստա-իցիկի ու ծայնագրիչի առջեւ ներկայացրին Յուլիսի 13ի իրենց արկածների մանրամասնութիւնները: Անտարմաբանական արարքների այդ շրջան, որը յայտնի ողբերգական իրադարձութիւնների պատճառը դարձաւ, իր հիմնաւոր նախադրուելներն ունի. սակայն այս մասին անելի ուշ: Սկզբում վերաշարարները պատմութիւնը: «Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան պատմական շրջանի զօրամասերից մէկում ծառայում էին 3 տղաներ Յուլիս Մեթրեանը, Արտակ Ալեքեան եւ Գրիգոր Մարիչեանը: Զօրամասային կեանքում նրանք, մեծը ասած, զոհեր չէին, որոնց փախուստի պատճառը կարող էին դառնալ տարբեր կարգի ճնշումներն ու բռնութիւնը. Յուլիս Մեթրեանը զօրամասում «հեղինակութիւն» էր եւ զինուորական ծառայութիւնը անցկացնում էր այլ տղաներին պայմաններ թելադրելով, ոգելից խմիչք ու թմրանիթ օգտագործելով, ընդ որում թմրանիթ նրան մատակարարում էր զօրամասի տասնակցներից մէկը: Մարիչեանն ու Ալեքեանը, որոնք յանձն իրենց «գաղափարական ոգեշնչողի» եւ հովանաւորի զօրամասում անոր յեմարան ունէին, վերջինս վարքագծի ընդօրինակողներն են էղել. Մարիչեանը դէպքից կարճ ժամանակ առաջ 1 տարուան ապստղանման իր դատապարտուել եւ պատիժը պիտի կրեր զինուորական ծառայութիւնից յետոյ:

Ամենաբողութեան պայմաններում յայտնուած այս ետեւկին երեւի սկսում են քիչ թույլ իրենց առաւելութիւնները, ուրուխտեւ, հիմնականում Մեթրեանի դրոյմամբ, համաձայնութեան գալիս փող աշխատելու նպատակով Ռուսաստան փախչելու: Իսկ մինչ այդ, քստ ծրագրի, իրենց կցուած ինքնաձիգներով պիտի լքէին զօրամասը եւ հասնէին Երեւան, ուր գտնուած յարձակումների միջոցով գումարներ պիտի շորթէին իրենց զօրացողման հարցերը լուծելու եւ հանրապետութիւնը լքելու նպատակով:

Փախուստի ծրագրի մասին տեղեկատ է եղել զօրամասի տասնակցներից մէկը, որը, Մեթրեանի ահաբեկումներից վախճանով, հրամանատարութեանը տեղեկատ է պահել ետեւկի դասալիքները 5 ժամ անց միայն:

Ազատութեան մէջ յայտնուած դասալիքներն այդ ընթացքում ինքնու են թալիչ զիդ ինքնաշարժ գտնելու: Տեղաբնակներից մէկն առաջարկում է իր ծառայութիւնները սեփական ինքնաշարժով նրանց տեղ հասցնելու դիմաց պահանջելով 10 հազար դրամ: Յուլիս Մեթրեանը համաձայնում է, ապա այդ տեղաբնակին պատկանող խանութից գնում է զգալի քանակութեամբ խմիչք: Դասալիքներն անխորդ զինները զօրամասի մի սպայի հետ

հարբեցողութեամբ զբաղուած էր թմրանիթի ազդեցութեան տակ գտնուող Մեթրեանի առանց այդ էլ բորբոքուած վարքագծի վրայ պարզ է, թէ ինչպէս պիտի անդրադառնար լրացուցիչ խմիչքը, այն էլ գարեջուրը:

Ինքնաշարժի տիրոջն ու նրան ուղեկցող համագիւղացուն հաւատացնելով, թէ իրենք մեկնում են զօրամասի հրաձգուած դասալիքները ճանապարհին խմում են եղած գարեջուրը:

Արդէն «համապատասխան» վիճակում գտնուող Յուլիս Մեթրեանեան արագ որոշում է ընդունում սպաննել զիւղացիներին ու իւրացնել մեքենան: Նա մի պատուական կնոճեցնել է տալիս ինքնաշարժը, ապա, ընկերների հետ առանձնանալով նրանցից պահանջում է իրականացնել սպանութիւնները: Սակայն քանի որ նրանք հրաժարում են, ինքն է սպաննում: Դիակները զցելով մերձակայ ձորը նրանք ուղղութիւն են վերցնում դէպի Վարդեհիս:

Հետաքրքրական է, սակայն, որ հարբած Յուլիս Մեթրեանեան ինքն է վարել ինքնաշարժը, իսկ հանդիպակաց պահակակէտն անցնելու համար նոյնիսկ խորանակուելու քննութիւնը ստուգուող մի մեքենայի հետ մէկտեղ նրանք աննկատ անցել են պահակակէտը, թերեւս նաեւ զինուորական համազգեստն է շփոթութեան մատնել պահակակ: Այնուամենայնիւ, վարձագաւոր արագութեամբ սլացող նրանց ինքնաշարժը անելի ուշ զրաւել է երկու գծային տեսչների ուշադրութիւնը, եւ դասալիքները սկսել են հետապնդուել: Հետապնդման ժամանակ Մեթրեանը կողքումն է մեքենայի կառավարումն ու բախուելով մտակար ժայռին կանգ առնում:

Ինքնաշարժից դուրս եկած երկու ընկերները նրա պահանջով դիմադար կրակ են բացում տեսչների մեքենայի վրայ ու, չհայած վերջիններիս յանձնուելու փորձերին, Մեթրեանը գնդակահարում է նրանց:

Վթարուած ինքնաշարժը դասալիքներին «ստիպում» է որոգայթ լարել ճանապարհով անցնող առաջին իսկ փոխադրամիջոցի դէմ: Նրանք կրակահերթով կանգնեցնում են անցնող «Նիվա» ինքնաշարժը, եւ Յուլիս Մեթրեանը կրկին ինքն է յանձն առնում սպանութիւնների դժուարին «գործը» մեքենայի բաց պատուհանից գնդակահարելով բոլոր ուղեորներին, այդ թոււմ 5-6 տարեկան երեխային: Սակայն նրանց չի յաջողում եղած մեքենաներից եւ ոչ մէկ սարքին վիճակի բերել, ոտքով են ճանապարհ ընկնում դէպի սարերը: Ըստ երեւոյթի այդ պահից են նրանք սկսում գիտակցել, որ ծրագրերը վերջնականապէս ձախողուած են, եւ օղակն իրենց շուրջը սեղմուած է:

Մեթրեանեան առաջին հերթին է գիտակցում, որ ամենամեծ յանցաւորութիւնն

իրենց է, եւ ինքնասպանութեան անյաջող փորձ կատարում: Ընկերները մտածելով, թէ նա մեռած է, թողնում են զէնքերն ու փախչում: Առանց պարագլխի նրանք թափառումներ երկար չեն տեսնու: Շուտով ձեռքակալում են դրանով իսկ, փաստօրէն, փրկուելով նրանցից. ուղքեր փրձուում էին իրենց ինքնադատաստան տեսչուց:

«Ազգ»

ԴԱՐՆԱԿՑՈՒԹԻՒՆՆ ԱՐՅԱՆՈՒՄ ՄՏԱՀՈԳ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ

Յուլիսի 25ին Շ. Յ. Դ. Արցախի Կենտրոնական Կոմիտէն հանդէս է եկել յայտարարութեամբ, որում մասնաւորապէս դրժգործութիւնը է յայտնում Յուլիսի 14ին Լեոն-Արդէն Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն դատաթանի սահմանադրական ատենակը՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի պատգամաւորների ընտրութիւնը թիւ 4 եւ 7 ընտրատարածքներում անվաւեր ճանաչելու որոշման առթիւ:

Ըստ Դաշնակցութեան յայտարարութեան, անօրինականութիւններ եղել են թէ՛ նախընտրական քարոզչութեան ժամանակ, եւ թէ՛ ընտրութիւնների ընթացքում. սակայն երկրի միջազգային վարկանշիչով մտահոգ լինելով՝ Շ. Յ. Դ. գործ է մնացել այդ մասին լրատումիջոցներին իրազեկելուց: Այս նոյն տրամադրումներով թեամբ Դաշնակցութիւնն անօրինական է համարում նաեւ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահի ընտրութիւնը (քանի որ իրենց պատգամաւորական խմբակցութիւնը չի ընտրուել՝ դրան չմասնակցելով), իսկ Ազգային ժողովի նախագահին համարում է ոչ օրինական:

Յայտարարութեան հրապարակման օրը Շ. Յ. Դ. Արցախի Կենտրոնական Կոմիտէն հրաւիրել է մամլոյ ստուլիս՝ այդ կապակցութեամբ որոշակի պարզաբանումներ անելու նպատակով: Աստիճար վարում էին երեքով՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի պաշտպանութեան, անվտանգութեան եւ օրինականութեան հարցերով յանձնաժողովի նախագահ Արթուր Մոսիսեանը, արդէն պատգամաւորական լրագրողութիւնից զրկուած Մաքսիմ Միրզոյեանը եւ Կենտրոնական Կոմիտէի անդամ Էմիլ Արրահմեանը:

Արթուր Մոսիսեանը վերստին հաստատելով Դաշնակցութեան անհամաձայնութիւնը ընտրութիւնների ամբողջական գործընթացի նկատմամբ, Արցախում ստեղծուած իրավիճակը բնորոշեց իբրեւ իշխանական-օրէնսդրական ճգնաժամ, քանի որ առկա է «իրաւական բռնատիրութիւնը»: Իրավիճակն անելի մեղմ բնորոշեց Մաքսիմ Միրզոյեանը, գտնելով, որ ճգնաժամ դեռեւս չկայ, բայց անխուսափելի է, եթէ շարունակուեն անօրինականութիւնները:

Խնդիրը մէկ-երկու լիազօրութեան կորստի մէջ է, նշեց Մ. Միրզոյեանը, այլ այն բանի, որ դատական եւ օրէնսդրական իշխանութիւնները անգործութեան են մատնուած, իսկ գործադիր իշխանութիւնը պարզապէս այդ մասին լուում է:

Ըստ նրա, դատարանը ոչ մի որոշակի խախտումներ իր կողմից չի մշտել, այլ պարզապէս բանաւոր բողոքների հիման վրայ կամայական որոշում է կայացրել: Մ. Միրզոյեանը կասկածի տակ առաւ նոյնիսկ սահմանադրական ատենակի օրինական լինելը. քանի որ օրէնքով այս ատենակի անդիւն կարող են լինել 35էն 70 տարեկան անձինք, իսկ ահա, երկու անգամների տարիքը գերազանցում է 70ը:

Այն հարցին, թէ կը մասնակցի՞ իբրեւ թեկնածու Յուլիսի 30ին կայանալիք վերաընտրութեանը, Մ. Միրզոյեանը պատասխանեց, որ ինքը դրան է մասնակցելու, որովհետեւ Սահմանադրական դատարանն իր անունը չի հանել թեկնածուների ցուցակից, բայց ահա դժուարանում է ասել ի՞նչ տրուի՞, թէ՛ ոչ:

Իր բաժինը ելոյթը է միլ Արրահմեանն ամփոփեց յիշեալ յայտարարութիւնը բարձրաձայն ընթերցելով եւ թիւ 18 ընտրատարածքում տեղ գտած խախտումները (որտեղ ինքը թեկնածու էր առաջադրւել) վերյիշելով: Յաւ յայտնելով, որ ինքը չի կարողացել անհրաժեշտ քանակութեամբ ծայրեր հաւաքել, նա ամբողջ միջոցները ծախսեց ժողովրդավարական Արցախի Միութեան անդամների վրայ, որոնք, նրա խօսքերով, չեն խորշել ոչ մի անօրինական քայլերից:

Այսուհանդերձ, Շ. Յ. Դ. Արցախի Կենտրոնական Կոմիտէի անդամները սպառնչ պատասխան չտուեցին լրագրողների այն հարցին, թէ ինչ են նշանակում «միայն ժողովրդի միասնական ջանքերով է հնարաւոր երկրի ղեկավարութեանը մղել դէպի ժողովրդավարութիւն» խօսքերը: որոնք եզրափակում էր յայտարարութեանը: Մամլոյ ստուլիսի կազմակերպիչների պարզաբանմամբ, Դաշնակցութիւնը կողմնորոշում է ժողովրդին ճիշդ ընկալելու իրականութիւնը, իսկ թէ ինչ կերպ պիտի վարուել, թող որոշի ինքը ժողովուրդը:

ԵՂՆԸ ԱՐՇԱԿԵԱՆ Ստեփանակերտ «Ազգ»

ԸԱՅՐԵՆԻԷ - ՍՓԻՒՆԵ

ՍՓԻՒՆԵԱՇՅԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹԻՒՆԸ ԸԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԱԻ ԸԻՍԷ Է ՍՓԻՒՆԸ ՃԱՆԱՇԵԼՈՒ ԸԱՍԱՐ

Հայրենիք - Սփիւռք փոխառնչութիւնների առանցքային բաղադրիչներից է Սփիւռքի հետ կրթական կապերի զարգացումը:

1999 թուականի Ցունեարին ստեղծուած կրթութեան եւ գիտութեան նախարարութեան Սփիւռքի բաժնի աշխատողները ի սկզբանէ պարտաւորուել են կանոնակարգել Հայրենիք - Սփիւռք կրթական քաղաքականութիւնը, այդ ուղղութեամբ տարուող աշխատանքները կայուն հիմքերի վրայ դնել:

Բաժնին իր առաքելութիւնն սկսել է Սփիւռքի կրթութեան բարեկարգութեամբ: Ասել է՝ բաւական բարդ կառուցուածք ներկայացնող եւ տասնամեակների ու հարիւրամեակների ընթացքում ձեւաւորուած հայկական գաղթածախների կրթական պատկերի ամբողջաբանմամբ: Արդիւնքում՝ Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ կրթական փոխարարբերութիւնների շրջանակներում իրականացուող բոլոր ծրագրերը բաժնում կազմուած են մշակուած են մի կարեւորագոյն գործօնի հաշուառմամբ: Սփիւռքի 390 լիտերայ գործող կրթածախներից (որից 210ը՝ ԱՊՀի երկրներում միջնակարգ դպրոցներ) իւրաքանչիւր գործում է տարբեր քաղաքակրթական միջավայրում եւ տնտեսական պայմաններում, ենթակայ է տարբեր քաղաքական, մշակութային ազդեցութեան:

Բաժնում Սփիւռքի կրթական քաղաքականութեան ուղղութեամբ տարուող ծրագրերը բազմազան են: Դրանցից են.

Սփիւռքի դպրոցներին դասագրքերով ապահովելու նպատակով դրանց լրացուցիչ քանակութեան հրատարակումը՝ ամէնամեայ պիւտճեկական յատկացումներով: Այն իրականացուել է կառավարութեան արութիւնը շրջանային համարիման վարչութեան հետ համագործարար, քանի որ կառավարութեան կողմից նշեալ նպատակով պիւտճեկ յատկացում է այդ վարչութեանը, Սփիւռքի ազգային - հայրենասիրական դաստիարակութեան մեթոտից եւ փորձից բխող ծրագրերի ներդրումը Հայաստանի կրթական համակարգ, Միջպետական հնարաւոր յարաբերութիւններում Սփիւռքի կրթական կարիքները ամրագրում են դրանց՝ միջպետական-իրաւական երաշխիքով լուծմանն ուղղութեամբ աշխատանքներ:

Բաժնի կարեւորագոյն ծրագրերից է Սփիւռքում գործող կ

գրականությունն էլ մշակույթ

ՈՐՈՒՆԵՍ ԿԸ ԾԱՌԱՅԷ

«ԱՐՈՒՆԵՍՏ՝ ԱՐՈՒՆԵՍՏԻ ՀԱՄԱՐ»... ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Այս հարցը նորություն է: Կու գալ անցեալին: Տարբեր ժամանակներու եւ տարբեր միջավայրի մէջ կը զգենու տարբեր իմաստաւորում եւ կ'ունենայ տարբեր մեկնաբանութիւններ: Այնուամենայնիւ, սակայն, էութիւնը կը մնայ նոյնը:

Հայրենի յայտնի գրող եւ հրատարակիչ Անահիտ Սահինեան Հայաստանի պարագային այս արտայայտութիւնը կը համարէ «գրքերից ներմուծում» քարոզչութիւն: Ըստ Սահինեանի, այս գաղափարի սուտութիւնը հայրենի երիտասարդ գրողներուն մէջ ունի հետեւորդներ, ըստ որոնց՝ «գրականութիւնը պէտք է ծառայի ինչ-որ բանի»:

Ինչի՞նչը մեծ ու հզօր պետութիւններու հովանիին տակ ապրող ժողովուրդները պէտք է չունեն յանձնարարական արուեստի, այսինքն ընդհանրապէս կան ճշմարտութիւն չունեն ընկերային, քաղաքական եւ կամ այլ յոռի երեւոյթներն ու ինքիները, ապա մեզի՞ հայրենու համար, մեր գոյատեւման համար մեծ նշանակութիւն ունին ալ թոյր ներքին ու արտաքին, ազգային ու մարդկային իրենց մեր կեանքին ու առօրեային հետ:

Իհարձեւ համաձայն Անահիտ Սահինեանի, նորերը, այսինքն անոնք, որոնք կը փորձեն ստեղծագործել համաձայն «Արուեստ արուեստի համար» տեսութան, այս միջոցով կը նպաստակարարեն «հասնիլ համաշխարհային չափանիշներու»: Ըստ անոնց՝ «Նարեկացին ու Չարեկցը համաշխարհային ճանաչման չեն հասնիր. որովհետեւ համաշխարհային չափանիշներինց ցածր են»: Հոս եւս նորերը պիտի ճանաչուին իր վրայ են:

Նախ «համաշխարհային ճանաչում» եւ «համաշխարհային մակարդակ» տարբեր հասկացողութիւններ են: Մենք գիտենք, որ կան բազմաթիւ գրողներ ու արուեստագետներ, որոնք համաշխարհային ճանաչում ունին, սակայն մակարդակ ոչ: Եւ կան նաեւ բազմաթիւ գրողներ ու արուեստագետներ, որոնք համաշխարհային մակարդակ ունին, սակայն ճանաչում չունին: Սովորելով համաշխարհային չափանիշները, համաշխարհային ճանաչում ունի այսօր: Կարողացէք անոր պատմը ւաճեցնել ու վերջը եւ բաղադրեցէք զայն Մկրտիչ Արմենի պատմուածքներուն ու վերջերս հետ: Ստալինեան անդահանքը պատկերող (որոնց համար

Սովորելով միջազգային համաբաշխ տիրացաւ) Մկրտիչ Արմենի պատմը ւաճեցնելու ու վերջը ոչ իրենց դրուագներու ուժգնութեամբ, ոչ ոնայն ու արտայայտչաձեւի գեղեցկութեամբ եւ ոչ ալ իրենց հետաքրքրականութեամբը ու գեղարուեստական լուծումներով կը զիջին Սովորելովին:

Մկրտիչ Արմենը միջազգային ճանաչում չունի... Հարցը տեսութան մէջ է, այլ բոլորովին ուրիշ տեղ: Եթէ Նարեկացին ըլլար Ֆրանսայի, գերմանացի եւ կամ անգլիացի, ան այսօր անուշադրուածներ կատարելու ուժ ունին, ապա անոնք չեն կրնար ըլլալ: Որակը կու գայ տաղանդի հետ եւ ուղիղ կը համապատասխանէ տաղանդի մեծութեան:

Իսկ ինչ կը վերաբերի «Արուեստ արուեստի համար» գաղափարին, ապա լավ հանդերձ, լաւապէս կը ծառայէ բոլոր անոնց, որոնք կ'ուզեն ալլասերիլ եւ կամ նսեմացնել ազգային արուեստն ու մշակույթը:

Ընդունելիք, թէ արուեստը ԱՐՈՒՆԵՍՏ ըլլալու համար պայման է, որ բանի մը ծառայէ: Սակայն ինչու՞ չընդունիք այն արուեստը, որ բանի մը ծառայելով հանդերձ, ուրոյն է, գեղեցիկ ու գրաւիչ: Մեր «անհամեստ» կարծիքով, արուեստի (այս պարագային՝ գրականութեան) չափանիշը կախեալ է բանի մը ծառայելու եւ կամ չծառայելու անոր դերէն, այլ՝ այն բոլոր ազգակներէն, որոնք արուեստի երկի մը կը հաղորդեն գեղարուեստական լիքը եւ գեղեցկութիւնը բառին գեղագիտական առումով:

Այս պարագային պիտի չուզէինք խորանալ այս հարցին մէջ, որովհետեւ մեր նպատակը հարցը ըստ էութեան քննարկելն է, այլ՝ զայն դիտելու շրջապատին մէջ՝ իբրեւ գրքերից ներմուծում գաղափարախօսութիւն:

Եթէ մեծ ազգերը, աւե-

Ուրեմն, մեր ազգային ու նաեւ հանրային շահը կը պահանջէ, որ արուեստը ծառայէ բանի մը: Անուշադր չարգիլել զայն. որովհետեւ եթէ մեր մշակույթը չծառայէ մեր ազգային շահերուն ու դատին, ապա անուշադրութեան ան պիտի ծառայէ օտարին եւ երբեմն ալ նաեւ՝ ուղղակի թշնամիին: Մենք տակաւին ունինք այնպիսի ինքիները, որոնց լուծումները իրենց հերթին պէտք ունին քարոզչական բնոյթի արուեստի, պայմանաւ որ այդ արուեստը ըլլալ բարձրորակ եւ համապատասխանէ միջազգային չափանիշներուն:

Երբ իսկապէս վերաբերի միջազգային չափանիշներուն. հոս եւս տարակարծութիւններ կը ծագին ու կը արին:

ՔԱՐԻ ԵՐԱԶԸ

Ստորեւ կու տանք ջաւախքի բանաստեղծ Սերգէյ Նահապետեանի հայրենասիրական կարօտաշունչ բանաստեղծութիւններէն մէկը՝ «Քարի երազը»:

Շուրջ 170 տարի առաջ բանաստեղծին նախնիները Կարնոյ թողան գիւղէն բռնած են գաղթի ճամբան: Սակայն, հաւատարիմ պապեանական օճախի անդրադարձ, անոնք իրենց հետ տարած են հայրենի տան օճախին քարը եւ զայն տեղադրած՝ Ջաւախքի Սուլդա գիւղի (նախկին Ջաւախ տուն) իրենց նոր տան պատին մէջ (ըստ ժողովրդական ասանկոյթի, «պապական օճախին քարը տունը տաք կը պահէ»):

Տարիներ ետք Աշտարակ հաստատուած Սերգէյը կ'անհետանայ տունէն: Յաջորդ գիշերը կը վերադառնայ յոգնած ու փոշոտած, բայց՝ յաղթական: Ջաւախքի հօրենական տունէն Աշտարակ բերած էր Կարնոյ կամարակապ ու զարդանախշ օճախի քարը՝ զայն անմիջապէս տեղադրելու համար Աշտարակի նոր տան պատին մէջ: Ահա այդ բոլորէն ներշնչուելով՝ ան գրած է «Քարի երազը» բանաստեղծութիւնը:

Իմ նախնիների սուրբ յուշն է, վկան,
Քարն իմ օճախի՝ մեծ ճամբայ կտորած,
Ա՛խ, իմ պապերը վաղուց էլ չկան,
Բայց օճախը ես չեմ թողել հանգած:

Ու քար չի կտրել սիրտը իմ քարի,
Նրա կրակը մեծ տան խորհուրդն է,
էս աշխարհում ով ինչ էլ բարբառի,
Իր շեղջի շուրջը իր ժողովուրդն է:

Առանց բառերի ոտանն է յիշում,
Մեր տունը՝ թողած երկրում դրախտի,
Քարիս թւում է, թէ բիրտ աշխարհում
Արդարութիւնը դեռ պիտի յաղթի:

Եւ կը գա՛յ օրը բաղձալի բախտի,
Դունքը կը բացուեն մեր դէմ դրախտի,
Ու ճամբայ կ'ընկնի քարն իմ օճախի,
Քարս էին տանը բարին կ'աւետի:

Բարին կ'աւետի իր հին, նոր ծխով,
Բարին կը մաղթի իր նոր կրակով,
Կ'արթնանան քնից պապերս խոռով,
Ջերմութիւն կ'անցնի հին տան երակով:

... Կարինից եկած դու օճախի՛ քար,
Դո՛ւ իմ սուրբ նախնեաց անո՛ւշ շունչ, կրակ,
Հողուոր պապերիս գրոցը արդար,
Դու ի՛մ յոյս, հաւատ, դու քարէ՛ կտակ:

Կարինից բերած դու օճախի քար,
Մի օր մեզ կ'ասեն՝ բարի՛ ճանապարհ,
Բարի՛ ճանապարհ դէպ երկիրը մեր,
Ուր դեռ արթուն են հող, երազ ու սէր:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՇՈՒԿԱՆ ՄԵՐ ՄՕՏ

- 750 L.L. 1 ԶԻՆՈ ԴՊՈՒՄ
- 500 L.L. 1 ԶԻՆՈ ՍՍԱՐՈՒԿ
- 500 L.L. 1 ԶԻՆՈ ՍՍԱՐՈՒԿ
- 350 L.L. 1 ԶԻՆՈ ՍՏԵՊՊՈՆ
- 300 L.L. 1 ԶԻՆՈ ԿԱՂԱՍՐ
- 400 L.L. 1 ԶԻՆՈ ՍՈՒՆ
- 750 L.L. 1 ԶԻՆՈ ՍԻՍՏՈՐ
- 600 L.L. 1 ԶԻՆՈ ԳԵՆԱՄԱՆՆՉՈՐ
- 350 L.L. 1 ԶԻՆՈ ԼՈՒԼԻԿ
- 500 L.L. 1 ԶԻՆՈ ԿԱՐՈՒԼԳ
- 450 L.L. 1 ԶԻՆՈ ԼԻՄՈՆ
- 450 L.L. 1 ԶԻՆՈ ԵՆԴԱՎԱՎԱՐԱՐ
- 450 L.L. 1 ՇԱՏ ՇԱՉԱՐ
- 750 L.L. 1 ԶԻՆՈ ԿԱՄԱՉ ՊՂՊՈՆԵՐ
- 750 L.L. 1 ԶԻՆՈ ԿՈՌՊ ՊՂՊՈՆԵՐ
- 750 L.L. 1 ԶԻՆՈ ՇԱԼԿՈՒ ՊՂՊՈՆԵՐ
- 1750 L.L. 1 ԶԻՆՈ ՍՈՒՄՈՒՄԻԷ
- 2000 L.L. 1 ԶԻՆՈ ԿՈՐՏՍՈՒԿ
- 1000 L.L. 1 ԶԻՆՈ ԱՃՈՒՐ

- 75 L.L. 1 ԶԻՆՈ ՉՍԵՆՈՒԿ
- 500 L.L. 1 ԶԻՆՈ ՍԵՆ
- 1000 L.L. 1 ԶԻՆՈ ՏԱԼՁ
- 1000 L.L. 1 ԶԻՆՈ ԽՆՁՈՐ
- 950 L.L. 1 ԶԻՆՈ ՆՈՒՅ
- 950 L.L. 1 ԶԻՆՈ ՍԱՆՈՐ
- 1250 L.L. 1 ԶԻՆՈ ՊԱՆԱՆ
- 1000 L.L. 1 ԶԻՆՈ ԽԱՂՈՂ
- 750 L.L. 1 ԶԻՆՈ ԴԵՂՉ
- 850 L.L. 1 ԶԻՆՈ ԱՄՈՒՏ
- 750 L.L. 1 ԶԻՆՈ ԿՈՐՏՈՆ

MASTER MALL
supermarket

ԳՆՈՒՄԻ
ԼԱԽԱԳՈՅՆ ՇԱՍՅԵՆ

ՄՈՎԱԶՍ
ՀԵՐԿԵԼԵՆ

